թիւն» (triple alliance) եւ մէկ միացեալ բանակ ուղարկեն Հայաստան։

3. Որովհետեւ օգնական ուժերը Եւրոպայից դէպի Հայաստան անցնել կարող են միմիայն Լեհաստանով ու Ռուսաստանով, ուստի Եռակի Դաշնակցութիւնը զօրք անցկացնելու իրաւունք պիտի ստանայ Լեհաստանի թագաւորից եւ Մոսկուայի մեծ իշխանից1)։

4. Ձեռնարկութեան մասին մինչեւ վերջին վայրկեանը Եռակի Դաշնակցութիւնը պէտք է մեծ գաղտնութիւն պահպանի։ Անգամ Լեհաստանի թագաւորը եւ Ռուսաստանի մեծ իշխանը չպէտք է այդ մասին առաջուց իմանան, որովհետեւ դա կարող է մեծ դայրոյթ պատճառել նրանց։ Լեհաստանի թագաւորին նրա համար, որ 15 տարի առաջ նա ցանկացաւ 30,000 զօրք ուղարկել եւ Հայաստանը գրաւել, եթէ Ղափանի իշխանները այդ բանը կամենային։ Իսկ նրանք այդ չկամեցան, որովհետեւ սատիկ ատում էին լեհերին։

Հետաքրքրական է այդ ատելութեան պատճառը։ Հարիւր տարի առաջ — ասում է յիշեալ յուշագիրը — լեհական ծառայութեան մէջ կար 30 հազարանոց մէկ հայկական բանակ՝ զօրեղ, քաջ եւ յաղթական։ Վախենալով թէ մի գուցէ մի օր Լեհաստանի տէրը դառնայ այդ բանակը, լեհերը տմարդօրէն ոչնչացրին նրան։ Պատերազմ ունենալով թաթարների հետ, նրանք գաղտնի համաձայնութեան եկան նրանց հետ եւ մի օր, կռուի դաշտում, հայկական բանակը երկու կողմից իրենց մէջ առնելով, դաւադիրօրէն կոտորեցին։ Ազատուեցին միայն 2000 հոգի։ Այդ օրուանից ահա հայերն ատում են լեհերին եւ ո՛չ մի վստահութիւն չունին դէպի նրանց։

Մոսկուայի մեծ դուքսի դայրոյթի պատճառն էլ այն է, որ նա՝ Մոսկուայի մեծ դուքսը՝ ամուսնացած լինելով վրացական մէկ իշխանուհու հետ, 50,000 մարդ ուղարկեց վրացիներին, որ սրանք գնան եւ Հայաստանը գրաւեն։ Սակայն հայ իշխանները չկամեցան անձնատուր լինել վրացիներին, որովհետեւ այդպիսով հայոց եկեղեցին պիտի ընդունէր յունադաւանութիւնը, որը լի է բազմաթիւ ապանդներով ու հերձուածներով։

5. Եւրոպական զօրքի պարէնն ու ձիերի կերը ամենուրեք կը մատակարարեն հայերը — սկսած նրանց շարժուելու օրից։

6. Դաշնակից ուժերը 1700 թուի Մայիսի վերջերին պիտի ճանապարհուեն Եւրոպայից. անցնելով Բոհեմիա, Լեհաստան, Ռուսաստան, Մոսկուայում նաւ կը նստեն եւ Վոլգայով կը դան մինչեւ Կասպից ծովի Հաջի Թարկան (Աստրախան) նաւահանգիստը։ Նոյն նաւերով երկու կամ երեք օրում Աստրախանից կը հասնին մի նոր նաւահանգիստ, Շամախուց 20, իսկ Բագուից 10 մղոն հեռու, որը եւ կազմում է Հայաստանի սահմանը։

7. Նոյն տարուան Հոկտեմբերի սկիզբներին նրանք պիտի լինին Բագուում եւ այդտեղից գաղտնի հասնին Շամախի, որը մէկ մեծ, հարուստ եւ առեւտրական քաղաք է, ինչպէս Քէօլնը, բայց առանց ամրութիւնների եւ պաշտպանութեան։

Այնտեղ նստում է պարսից նահանգապետը (gouverneur), ունենալով մօտաւորապէս 30 մարդ։ «Անհաւատները» մի ժամ էլ չեն կարող դիմադրել, որովհետեւ քաղաքում կան 7 հայ համայնքներ. բոլոր վաճառականներն ու առեւտրականները հայեր են։ Հէնց որ դաշնակից զրօշակները ծածանին, քաղաքից դուրս կը դան ու նրանց կը միանան 10,000 հայեր, բոլորն էլ սպառազէն ու հեծեալ։

8. Շամախին կազմում է Հայաստանի սահմանը եւ պատկանում է Հայաստանին։ Այդտեղից դուրս գալով, զօրքը պիտի բաժանուի չորս մասի եւ արագօրէն շարժուի չորս ուղղութեամբ։ Առաջին բանակը պիտի գնայ Գանձակի վրայ, ուր նստում է մէկ նահանգապետ մօտաւորապէս 30 մարդով։ Քաղաքը չունի որեւէ պաշտպանութիւն։ Շրջակայքի ազգաբնակութիւնը բոլորն էլ քրիստոնեաներ են։

Երկրորդ բանակը կը շարժուի ուղիղ դէպի Լոռի, ուր մի քաղաքում նստում է խանը, առանց զօրքի ու պաշտպանութեան։ Երրորդը՝ դէպի Ղափան, որը նոյնպէս անպաշտպան է.

1) Մի շարք փաստաթղթերի մէջ Ռուսաստանը միշտ կոչւում է Մոսկովիա, Ռուսները՝ Մոսկովիտներ, իսկ կանոնց թագաւորը՝ Մոսկովիայի կամ Մոսկովիտների մեծ իշխան (Le grand duc des Moscovites)։